

2012 թ. սեպտեմբերի 22-ին Արդիա Հասարակական Կազմակերպությունը կազմակերպեց «YES HAY EM, YES I AM» խորագրով փառատոն: Կոնֆերանսում քննարկվեցին ինքնությանը վերաբերվող հիմնադրույթներ և առանձնապես՝ Հայի ինքնությանը բնորոշ հատկանիշները:

«Հայասա» - ուսանողական միության ներկայացուցիչ Տիգրան Բաղդասարյանի ելույթը՝

Երիտասարդները՝ որպես հայության ապագա

Մենք՝ հայերս լինելով թվով փոքրաթիվ ազգ հաճախ ենք հանդիպում մարդկանց, ովքեր չգիտեն կամ երբևէ չեն լսել մեր մասին: Այդպիսի հանդիպումներ ես հաճախ եմ ունեցել և ամեն անգամ կանգնել եմ միևնույն խնդրի առջև. ինչպե՞ս մի քանի բառով ասել, թե ովքեր են հայերը: Չգիտես ինչու ամեն անգամ գնում եմ պատմության խորքերը՝ հիշելով Հայկին, ով հաղթեց Բաբելոնի արքային, հիշելով առաջին շումերական գրերը, որտեղ հիշատակվում է Հայաստանը, ապա անցնելով ծովից ծով Հայաստանով հասնում նրան, որ մենք առաջին քրիստոնեա ազգն ենք և արդեն ավելի քան 1500 տարի է ունենք մեր սեփական գրերը:

Սակայն այժմ նոր հասկանում եմ, որ ինքներս մեր ինքնությունը հասկանալու համար հաճախ ենք գնում ետ, մեր պատմության ակունքները և երբեմն մնում այնտեղ: Կարծես թե մոռանում ենք, որ մենք հիմա էլ կանք, որ ունենք ներկա և անպայմանորեն ունենք ապագա: Այսօր կփորձեմ հայացք նետել մեր ներկայի խնդիրների վրա, որոնք լուծում են պահանջում և կարևոր են ապագայի համար: Մեր ինքնությունը, ինչպես և մարդկությունը պետք է շարժվի առաջ և եթե մենք չմտածենք և չկերտենք մեր ապագան, ապա հավատացեք շատերը կգտնվեն, որ դա կանեն մեր տեղը: Դարերի ընթացքում անկախ պետականության բացակայությունը և դրան հետևած ողբերգական իրադարձությունները հենց դրա ապացույցն են:

Մինչ շարունակելը կուզենայի նշել, որ ոչ մի կերպ չեմ փորձելու հերքել այն փաստը, որ յուրաքանչյուր հայ պետք է ճանաչի իր պատմությունը, խոսի հայերեն և իմանա իր անցյալը: Այսօր շատ հայեր չեն խոսում հայերեն, կամ ծանոթ չեն հայոց պատմությանը, կամ վատագույն դեպքում ո՛չ խոսում են հայերեն, ո՛չ էլ գիտեն պատմությունը: Սակայն, հաշվի առնելով մեր պատմության վերջին շրջանը և բազմաթիվ դժվարությունները, որ բաժին ընկան հայերին դա կարելի է ինչ որ չափով ընդունել: Կարծում եմ այդ խնդիրը կլուծվի, եթե հայ ազգը վերջապես ընտրի առաջ շարժվելու մարտավարություն և հայությունը սկսի հավատալ իր ապագային:

Հասկանալու համար մեր խնդիրները հաշվի առնենք այն փաստը, որ հայությունը այսօր բաժանված է երկու մասի՝ Հայոց պետականության շրջանակում բնակվող հայերի և Սփյուռքահայերի: Իհարկե սխալ է հայությանը բաժանել մասերի, քանի որ վերջապես հայը մնում է հայ, սակայն զարգացման մարտավարության իմաստով պետք է անպայմանորեն կիրառվեն տարբեր մոտեցումներ տարբեր խմբերի նկատմամբ՝ ունենալով որպես միևնույն վերջնական նպատակ՝ հզոր պետականություն, որտեղ յուրաքանչյուր հայ իրեն կզգա ազատ և ապահով:

Մեծապես կարևորելով այսօրվա Հայաստանի խնդիրները՝ այժմ կնախընտրեի խոսել Սփյուռքահայության և մասնավորապես Բելգիայի հայության խնդիրներից: Իրականությունը այն է, որ այսօր գրեթե ամեն հայ միայնական է գործում՝ կարծես կախված լինելով օդում: Այս իրավիճակը հաղթահարելու համար հայությանը հարկավոր է ունենալ ընդգծված մարտավարության, ձևակերպված ներքին քաղաքականություն և առաջնորդներ, ովքեր կկարողանան համակարգել այս ամբողջ գործընթացները: Ուստի այսօր առաջնային է է հենց այս խնդիրների լուծումը, որը նախապայմանն է հետագա գործողությունների և անլիքների:

Կուզենայի նշել, որ այս հարցերը հատկապես կարևորվում են երիտասարդ սերնդի կողմից: Լինելով ուսանողական միության ներկայացուցիչ՝ կարող եմ ասել, որ հայ երիտասարդությունը զգում է հայ համայնքի առաջնորդության պահանջը և օգնություն կարիքը իրենց տեղը գտնելու հայության մեջ: Այնպիսի տպավորություն է, որ մենք՝ հայերս, կարծես մոռացության ենք մատնում մեր ամենամեծ հարստությունը, որը հենց մենք ենք, մեր երեխաներն են և մեր երիտասարդները: Դրան ավելացնելով նաև հայերի բնատուր ձգտումը դեպի ուսումը և գիտելիքը՝ կարող ենք ասել, որ ունենք ահռելի չոգտագործված պոտենցիալ:

Կարծում եմ ժամանակն է, որպիսզի հայությունը իր հայացքը ուղղի դեպի երիտասարդությունը և աջակցի, որպիսզի նրանք դառնան մեր վաղվա մարտիկները՝ զինված անհրաժեշտ գիտելիքով և հմտությամբ: Գիտելիքն ու լուսավորությունն են այսօրվա զենքերը և հայությունը պետք է աշխատի հենց այդ ուղղությամբ: Եթե մենք այսօր օգնենք և ուղղորդենք երիտասարդությանը ճիշտ ճանապարհով, ապահովենք նրանց անհրաժեշտ կրթությամբ և գիտելիքով, աջակցենք նրանց այս բարդ ուղղու վրա, ապա համոզված եղեք, որ արդեն վաղը խնդիրների մեծ մասը լուծված կլինի:

Ամփոփելով խոսքս կարող եմ ասել հետևյալը՝ չափազանց շատ սևեռված լինելով անցյալի վրա, մենք հաճախ մոռանում ենք մեր ներկայի և ապագայի մասին: Այսօր հայությունը առաջ ընթանալու մարտավարության լուրջ պակաս ունի: Այս պարագայում առավել խոցելի է դառնում սփյուռքահայ երիտասարդությունը, ով փորձում է իր տեղը գտնել այս համահայկական պայքարում՝ ցանկանալով օգտակար լինել հայությանը: Հաշվի առնելով, որ այսօրվա զենքը գիտելիքն ու կրթությունն են, իսկ զինվորները՝ կրթված և բանիմաց երիտասարդները, անհրաժեշտ է համարում հայ համայնքի ուշադրությունը ուղղել հենց երիտասարդների և երիտասարդական քաղաքականության վրա:

Համոզված եմ, եթե այսօր հայությունը իսկապես աջակցի իր երիտասարդությանը և ուղղորդի նրանց ճիշտ ճանապարհով՝ վաղը մենք կունենանք մեր երազանքի երկիրը:

Տիգրան Բաղդասարյան

«Հայասա» Բելգիայի հայ ուսանողական միության նախագահ